

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի
Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ



ՆՈՐ ՇՐՋԱՆ — ԹԻ Ի Ը

ՆՈՅՇՄԲԵՐ 1900

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ր Ն

Էջ

1. Խմբագրական . —
Մեր Ազգային Լրագրութիւնն եւ հայ ֆանսանյն . 225
2. Աւանդութիւն Հայաստանեայց Եկեղեցոյ . —
Հաւածակն ընդ Տրդատաւ . — Ս. Հռիփսիմեանկ 231
3. Քարոյ . — Հպարտութիւն . — 239
4. Կրօնական Դաստանդութիւն . —
Փորձութիւն յանապատի . 247
5. Ամերիկայի Հայ Բողոքական Քարոզիչ ըի . 250
6. Քարոյական Ոստանորք . 254

Հանդիսիս բաժանորդագինն է ամեն
տեղի համար տարեկան 4 Շիլինգ կամ 5 Փրան,
վեցամսեայ 2 Շիլինգ կամ 2½ Փրանք քղթատարաւ :

Խմբագրութեան կամ բաժանորդագրութեան
վերաբերեալ որ եւ իցէ գրութիւն պէտք է ուղղել
առ Խմբագրութիւն Հանդիսիս, հետեւեալ հասցէի .

ARMENIAN RECTORY,

Upper Brook Street,

MANCHESTER.

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

Ա Մ Ս Ա Ք Ե Ր Ք

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն Ե Ա Ս Տ Ո Ւ Ա Մ Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ Ե Ա Ռ Ն Տ Ե Ա Ռ Ն Մ Կ Ր Տ Ջ Ի

Ս ր ք ա զ ն ա զ ո յ ն Կ ա ր թ ո լ ի կ ո ս ի Ա մ ե ն ա յ ն Հ ա յ ո յ

Թ Ի Ի 8

Ն Ո Ր Շ Ր Ջ Ա Ն

Ն Ո Յ Ե Մ Բ Ե Ր 1900

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Մ Ե Ր Ա Ջ Գ Մ Յ Ի Ն Լ Ր Ա Գ Ի Ռ Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ի Հ Ա Յ
Ք Ա Ջ Ա Ն Ա Յ Ն .

Ազգային լրագրաց եւ պարբերական հրատարակու-
թեանց մէջ ամենէն յաճախ երեւցող նիւթն մեր կղերին
դէմ գրուած յօդուածները կը կազմեն, որ երբեմն իբրեւ
խմբագրական երբեմն իբրեւ թղթակցութիւն այլ եւ այլ
քաղաքներէ այս կամ այն քահանայի թերութիւններն
յերեւան կը բերեն, կամ ամբողջ դասակարգը կը պահա-
րակեն: Կղերական դաշտակղութիւններն են որ ամենէն
տուէլի ուշադրութիւն կը գրաւեն, թերթերն իրարմէ փոխ
կ'առնեն եւ կ'երկարաբանեն, արձակ ու ոտանաւոր զա-
ւեշտաբանութեանց նիւթ կ'առնեն հայ քահանայի կեր-
պարանքէն, շարժուածքէն, խօսուածքէն, նորա անցեալ
կեանքէն կամ ներկայ կենցաղաւարութենէն: Մեր ազգի
լրագրութեան սահմանափակ գրութիւնն եւս գուցէ մի

պատճառ է, որ երբ ուրիշ առարկայից վերայ գրել կարող չեն կամ իրաւունք չունին, անմիջապէս այս «չահեկան» նիւթի վերայ մի երկար յօդուած կամ նամակ կը պատրաստեն առանց դժուարութեան եւ կատարեալ ապահովութեամբ, որ ոչ արգելող պիտի լինի, եւ ոչ հակառակ պատասխան կամ քննադատութիւն պիտի երեւի: Մեր երիտասարդ գրասէրներ եւս իւրեանց զրչափորձութեան երախայրիքն ընդհանրապէս հայ կղերի զեղծմանց, սգիտութեան, անարժանութեան եւ այլ այսպէսակ յատկութեանց կընուիրեն:

Արդարեւ անուրանալի է որ հայ կղերն կատարեալ լինելէ շատ հեռու է, ըստ մեծի մասին ոչ իւր կոչման լիովին կըհամապատասխանէ, եւ ոչ մեր Եկեղեցւոյ պահանջեալ յատկութիւններն ունի: Շատ դժուար է ասել թէ իւրաքանչիւր ընծայացու ի՛նչ մտօք կըպատասխանէ ձեռնադրող եպիսկոպոսի հարցումներ թէ՛ «Թողեա՛լ է զամենայն հոգս զբաղմանց աշխարհիս, եւ զիւր յովորութեամբ կեալն»: Կամ երբ կըհարցնէ՛ «Պահեա՛լ է զանձն իւր սուրբ եւ անարատ ի ծննդենէ մինչեւ ցայսօր»: Բայց տարակոյս չկայ որ հարիւրին իննսուն եւ ինն ոչ ձեռնադրող եպիսկոպոսն: Եւ ոչ ձեռնադրելի ընծայացուն կարեն խղճի մտօք «Այո՛» ասել Մաշտոցի այն հարցմանց թէ «Ունի՞ զուսումն քահանայութեան լիով, եւ զգիտութիւն աստուածային օրինաց», եւ «զբաւանութիւն ուղղափառ հաւատոյ»: ոչ եւս նախկին Եկեղեցւոյ այն բաղմաթիւ սուրբ հարց եւ վարդապետաց գրուածոց տեղեակ են, որոց «Աշակերտիմ եւ հետեւիմ» կըխոստանայ իւրաքանչիւր հայ քահանայ, եւ ոչ այն անհամար հերետիկոսաց ով լինելը՝ որոցմէ կըհրաժարի: Նաեւ անուրանալի է որ ազգային զարաւոր թշուառութիւն պատճառ տուած է հոգեւորական դասուն ինչպէս մտաւորապէս, նոյնպէս եւ նիւթապէս ու բարոյապէս անկեալ վիճակին. եւ հոգեւորականութիւնն որ օտար ազգաց մէջ ըստ մեծի մասին ընկերութեան բարձրագոյն եւ միջին դասակարգի մարդոցմէ կըկազմուի, մեր մէջ ըստ մեծի մասին ամենէն ստորին դասակարգէ կազմուած է: Արդէն հայ քահանայի տխուր վիճակն ժողովրդական առածի կարգ անցած է.

«Տէր տէր շինիւր զԿիւր Գեղը»

Եթէ չապրի գձիւր Գեղը»:

Մի՞թէ շատ տարօրինակ բան մի է որ ընկերութեան

ամենէն ստորին դասակարգէ, առանց որեւէ կրթական նախապատրաստութեան, հոգեւոր աստիճանի բարձրացած մէկը՝ իւր վսեմ կոչման պարտաւորութեանց անհամապատասխան կըզգտնուի: Միթէ զարմանալի՞ է որ մտօք ու սերնդեամբ այսքան խեղճ, նիւթապէս ալ աղքատիկ դասակարգի մարդիկ, հաղիւ հազ կարեն իւրեանց եւ իւրեանց ընտանեաց պարուստն ճարել այլ եւ այլ ներելի եւ աններելի, երբեմն եւս տղեղ ու տխուր միջոցներով:

Եթէ Հայ Եկեղեցին Հռովմէական Եկեղեցւոյ սահմանադրութիւնն ունենար, մեր ժողովրդեան եւ մեր լրագրաց գանդատներ շատ իրաւացի կըլինէին: Հռովմէական Եկեղեցւոյ մէջ միայն Պապն եւ Պապէն արտօնեալ եպիսկոպոսներն են պատասխանատու քահանայից կոչման, ձեռնադրութեան, պաշտօնի եւ ապրուստի համար: Իւրաքանչիւր ձեռնադրող եպիսկոպոս իւր ընծայացողներ կ'ընարէ, իւր լիազօր իշխանութեան ներքոյ կըկրթէ ինչպէս որ ինք յարմար կըզգատի, կըձեռնադրէ իւրուզած փամանակ, եւ կըկարգէ իւր թէմի մէջ գտնուած եւ իւր յարմար դատած մի որ եւ է եկեղեցւոյ պաշտօնեայ. եւ եթէ պատճառաւ իւրիք շկարենայ իւր նորընծայի համար պաշտօն գտնել՝ ինքն եպիսկոպոսն պարտաւոր է նորա անձնական ծախքերն հոգալ ձեռնադրուած օրէն սկսեալ: Ժողովուրդն ամենեւին ձայն չունի իւր հոգեւորականի կրթութեան, ձեռնադրութեան կամ պաշտօնի կոչման եւ ընտրութեանց մէջ. ժողովուրդն միայն հնազանդիլ պարտի, եւ ոչ այլ ինչ: Եթէ, կըկրկնեմ, մեր Եկեղեցին մի այսպիսի սահմանադրութեամբ կառավարուէր, յայնժամ կատարեալ իրաւունք կըտայինք մեր ժողովրդեան եւ մեր աղքային լրագրութեան (ենթադրելով թէ այս վերջինը հայ ժողովրդեան ձայնն է), որ ասեմ ու վրեն հայ կղերին դէմ ինչ որ կ'ասեն ու կըզբեն:

Բայց մեր Եկեղեցւոյ սահմանադրութիւնը բոլորովին տարբեր է Հռովմէականէն: Մեր Եկեղեցւոյ ամենայեւնեալ տիրացուէն սկսեալ մինչեւ կաթողիկոսն ժողովրդեան ազատ ու անկախ ընտրութեամբ պաշտօնի կըհասնի: Մեր ազգի բոլոր կրթական հաստատութիւնք հայ ժողովրդեան ըստ մեծի մասին աշխարհական դասու խնամոց եւ մատակարարութեան ներքոյ են (հոգեւորականաց մասնակցութիւնը «բարոյական», կամ աւելի լաւ, անուանական է): Հայ քահանայի ընտրութեան իրաւունքն

միմիայն աշխարհական ժողովրդեան կը պատկանի, որ իւր սիրածն եւ յարմար դատածը կ'ընտրէ եւ եպիսկոպոսին կը ընկերկայացնէ ձեռնադրութեան համար. եւ հայ ժողովուրդն է որ իւր քահանայի նիւթական պէտքերը կը հոգայ իւր զիտցած եղանակաւն: Եկեղեցին կամ եպիսկոպոսն ձեռնադրելէն վերջ այլ հւստ որ եւ է պարտաւորութիւն չունի քահանայի կարող կամ անկարող պաշտօնավարութեան մասին, ինչպէս որ մասամբ իւրիք անպատասխանատու է նորա մտաւոր նախապատրաստութեան, ընկերային աստիճանի եւ մինչեւ իսկ բարոյական կացութեան եւ նիւթական պիտոյից համար, քանի որ ժողովրդեան ընտրածն է եւ ժողովուրդն է որ կը հաստատէ եպիսկոպոսի օրհնութիւնն՝ «Սղիցի եղիցի» ասելով:

Եթէ ճշմարիտ է թէ ամեն ալզ արժանի է այն կացութեան յորում ինք կը դնուի, ուրեմն կրկին անգամ ճշմարիտ է թէ մի եկեղեցական հասարակութիւն որ իւր եկեղեցւոյ վարչութեան ու մատակարարութեան մէջ եւ իւր հոգեւորականաց ընտրութեան մէջ այնքան անկախ ու ինքնիշխան է որքան հայ ժողովուրդն՝ լիովին արժանի է իւր ունեցած կղերին: Վասն զի եթէ լաւագունին արժանի է, թող իւր ազատութիւնն ու իրաւունքն գործ ածէ եւ լաւագոյնն ընտրէ. թող պահանջէ որ ամեն քահանայացու առանց մի աստուածաբանական ընթացք աւարտելու, առանց խիստ քննութեան ենթարկուելու չձեռնադրուի: Կամ իւր անմիջական պէտքերն հոգալու համար թող հրաւիրեն այն լրագրապետներն եւ նոցա թղթակիցներ որոց ճառեր հայ կղերի ապիկարութեան եւ անարժանութեան վերայ այնքան մեծ տեղ կը բռնեն ազգային թերթերի մէջ՝ կղերական աստիճան ընդունիլ եւ գործով եւս ցոյց տալ մեզ ինչ որ մինչ ցարդ բանիւ եւ եթ քարոզած են եւ կը քարոզեն: Ինչու՞ համար իւրեանց քահանայ կը նտրեն այնպիսիներ որ յառաջագոյն անյաջող խանութպան, կօշկակար, սափրիչ կամ ստորին արհեստաւոր եղած էին: Ինչու՞ համար բարձրագոյն դասակարգի ընտանիքներէն, բարեկիրթ, ուսեալ եւ պատուաւոր անձեր չեն ընտրեր իւրեանց քահանայ կամ վարդապետ: Ըստ մեծի մասին աշխարհական անդամներէ բաղկացեալ խնամակալութեան ներքոյ գտնուած Արամաշու Դպրեւանքի մէջ, մինչդեռ արեղայութեան սահմանեալ

ուսանողք վեց տարուայ ընթացք աւարտելու միջոց ունին, քահանայացուներին միայն վեց ամսէն մինչեւ մէկ տարի առիթ կրօսուի ցանկացողին երթալ Արմաշ, չգիտենք ի՞նչ սորվելու այդ կարճ միջոցի մէջ: Ահաւասիկ քահանայութիւնը ստորնացնելու ամենաքանչեւի՛ միջոց, որ հայ ժողովրդեան ներկայացուցիչներէն հնարուած է եւ մեր լրագրապետաց հաւանութեան արժանացած է՞ (*): Երբ Քրիստոս կըհարցնէ՝ «Մի՞ թէ քաղիցեն ի փշոց խաղող, կամ ի տատասկէ թուզ», մեր ազգային լրագրութիւնը կըպատասխանէ. Այո՛, մենք խաղող կ'ուզենք, մենք թուզ կ'ուզենք. հոգ չէ թէ փուշ կամ տատասկ տնկած ենք»:

Հայ քահանայն շատ աւելի սերտիւ կապուած է հայ ժողովրդեան հետ քան թէ օրինակի համար Հոռովմէական, Յունական կամ Անգլիական Եկեղեցւոյ քահանայն իւր ժողովրդեան հետ. հայ քահանայն մասնաւոր կերպիւ հայ ժողովրդին կըպատկանի. ոչ թէ ժողովրդէն անջատեալ, ժողովրդեան վերայ տիրապետող սնն է, այլ նորա հայրն ու եղբայրն ու մտերիմ բարեկամն է: Եթէ իւր այդ հայրական կամ եղբայրական պաշտօնը կատարելու անկարող է, ոչ ապաքէ՛ն մեղքը ժողովրդինն է որ իւր յօժար կամօքն անկարող մարդիկ ընտրած է այդ սիրոյ վսեմ պաշտօնին: Կամ ընտրելէն վերջ, ի՞նչ օգուտ ամեն օր հրապարակաւ պախարակելու ժողովրդեան ընտրեալն (որ ժողովուրդը պախարակել ասել է), եւ արդէն ըստ ինքեան չար բանն աւելի վնասակար կացուցանելով՝ լրագրաց մէջ հրատարակելով, անմեղներն ու մանուկներն գայթակղեցնելով, կրօնի պաշտօնէից թերութիւններ, արդարութեամբ կամ յանիբաւի, հրապարակաւ նշաւակելով՝ կրօնքն անարգել եւ կրօնի սէրը պաղեցնել ու ցամաքացնել հաւատացելոց սիրտերէն:

Մեր Եկեղեցւոյ այս մեծ չարեաց միակ ճարն ժողովրդեան ձեռքն է, եւ ժողովուրդը պիտի պահանջէ հետեւեալն: —

(*) Չենք անգիտանար որ Արմաշու Գպրեվանուց կանոնադրութիւնը կընկեր ուսանողաց որ առաջին երկու տարին առանց արեղայ դասնալու խոտման մեան, բայց յետ աշու կըստիպուի ուսանողն, «բքան ուշիմ և խոստմնալից լինի, կամ ամուրիութիւն ուխտելով՝ սարկաւազ ձեռնադրուիլ, կամ Գպրեվանքէն հեռանալ: Տարական ուսմանց կարօս մի ուսանող անկարելի է որ քահա-

1. Ամեն հայ հոգեւորականի համար աստուածաբանական մի որոշ ընթացք նշանակուի, եւ առանց այդ ընթացքը կատարելու (կղերանոցի մը մէջ կամ առանձին) եւ կանոնաւոր քննութեամբ յիշեալ առարկայից հմտութիւնն ցոյց տալու՝ քահանայ չըձեռնադրուի:

2. Ամուսնացեալ քահանայք հաւասար կրթութիւն ստանան ամուրի կղերին հետ. կղերանոցաց մէջ (մասնաւորապէս Արմաշու Դպրեվանոց մէջ) ուսանողք միայն ամբողջ վեցամեայ շրջանն աւարտելէն վերջ հարցուին թէ քահանայ կամ արեղայ դառնալ կ'ուզեն. եւ քսանամեայ ուսանող աշակերտի վերայ բարոյական ճնշում եւ դպրոցէ արտաքսուելու սպառնալիք չբանեցնեն, եթէ ամուրիութիւնն չուխտէ:

3. Ամեն քահանայի ապրուստ ապահովուի ինչ եղանակաւ որ կարելի է կամ յարմար է իւրաքանչիւր հասարակութեան, որոշեալ ոտճիկով կամ այլապէս կարգադրեալ տուրքերով: Խնդիրն այս ինչ կամ այն ինչ ձեւի վերայ չէ, այլ քահանայն ապրուստի մտահոգութենէն ազատ պահելու վերայ է:

Եթէ մեր պատուական հայ ժողովուրդն, որ իրաւամբ վշտացած է իւր քահանայից անկեալ դրութեան վերայ, փոքր ինչ աշխատի այս բարեփոխութիւնը կատարելու հայ քահանայութեան յաջորդ սերունդի նկատմամբ, մի քանի տարուայ մէջ պիտի տեսնէ ու վայելէ իւր աշխատութեան պտուղն. յայնժամ այլ եւս պէտք չի մնար քահանայից վերայ դրուած այն ողբալի յօդուածոց, որով հայ մամուլն յաճախ հայ ժողովրդեան սիրտը կը ճմլէ եւ նորա կրօնական ամենախորին զգացումները կը լիրաւորէ:

Նայական պաշտօնի վերաբերեալ գիտութեանց որեւէ մի նշմարելի մասին կարենայ տիրանալ յընթացօ երկուց ամաց, որ շրջաննոյն իսկ տարրական ուսմանց համար քիչ է:

ԱՐԱՆՊՈՒԹԻՐՆ

ԷԱՅԱՍՏ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ .

ՀԱՒԱԾԱՆՔ ԸՆԴ ՏՐԴԱՏԱԻ . — Ս. ՀՈՒՓՍԻՄԵԱՆՔ .

1. Ս. Գրիգոր ի Խոր Վիրապին . — Տրդատ եւ Ս. Գրիգորի համաձայնորդք այժմ կերպիւ իւրք ազատ չունչ առին համարելով թէ Ս. Գրիգոր այլ եւս մեռաւ Արտաշատի գրոյն մէջ : Նորա բարեկամք եւս հաւանօրէն մասնակի գոհունակութիւն զգացին որ այն սոսկալի տառապանքներն ու տանջանքներ այլ եւս դադարեցան : Բայց իրողութիւնն այդպէս չէր : Ս. Գրիգոր Խոր Վիրապի մէջ տասներեք (1) տարի կենդանի մնաց՝ անդադար խորհելով եւ աղօթելով իւր ազգի եւ հայրենեաց լուսաւորութեան համար : Կենաց հանգստութեան պարագայներէն զրկուած լինելով, ինքզինքն հոգեւորապէս կրմխիթարէր եւ կրօնփոխէր : Ոչինչ նուազ սփոփիչ եւ մխիթարական էր Աստուծոյ մասնաւոր տնօրէնութիւն, որով ըստ աւանդութեան մեր Եկեղեցւոյ՝ Աստուծոյ հրեշտակներէն մին, որ Ս. Գրիգորի մասնաւոր պահապան հրեշտակը կարգուած էր, ամեն օր կ'այցելէր Ս. Գրիգորին եւ երկնային լուսով կը քաղցրացնէր նորա ստորերկրեայ բանտարկելութեան դառնութիւնն : Այս աւանդութիւն տեղի տուած է Համբարձման տօնին յաջորդող Երկրորդ Մազկազարդ կոչուած Կիրակէի տօնակատարութեան, որ աւանդութիւն համառօգիւ նկարագրուած է նոյն աւուր Օրհնութեան շարձկանի առաջին երեք տանց մէջ : —

« Մեծահարաշ այս խորհուրդ աւանդութեամբ առ մեզ հասեալ, զոր հոգւոց լուսատուն ի պաշտպանէն իւրմէ լուեալ . եթէ տօն մեծ է այսօր իմոյ դասուն որ ի յերկինս :

(1) Ստոյգ պատմագիրներ Ս. Գրիգորի բանտարկելութիւնը կրհամարին տասներեք տարի եղած . ոմանք տասներեքէն մի քիչ աւելի լինելուն համար տասն եւ չորս տարի նշանակած են . Իսկ երբ մեր Շարականը կ'ասէ « Երիւք հնգօք ամօք ի Վիրապին ճգնեալ », մեք պէտք չէ իբրև պատմական ճիշդ թիւ հասկանամք, այլ բանաստեղծի յարմարութիւն այնպէս բերած է որ հինգը չորսի մերձակայ թիւը լինելով հինգը երեքով բազմապատկուածը կ'արտադրէ տասն եւ չորսի յաջորդ թիւն :

« Քանզի ի յԵԼՁԸՆ վերին երկնաւորին որ ի յերկրէ , ըստ դասուց երկնաւորացըն տօնէին ուրախութեամբ , ի հրեշտակացն սկսեալ մինչ ի յաթոռօրն կատարեալ :

« Իսկ ի չորրորդըն դասէ պաշտպան եղեալ Լուսաւորչին , ի դասուն իւր փութացեալ ուրախութեամբ տօնակցութիւն , զոր հարցմամբ ի նմանէ տեղեկանայր մարմնով հրեշտակն » :

Տօնապատճառք այսպէս կը պատմեն սոյն աւանդութիւն : Մի օր Համբարձման տօնի չորրորդ օրն որ կիրակի էր , Ս. Գրիգորի պահապան եւ այցելու հրեշտակն չի երեւիր : Միւս օրն Ս. Գրիգոր կը հարցնէ թէ երէկ ինչո՞ւ չեկար : Հրեշտակն կը պատմէ թէ Քրիստոսի ի յերկինս համարաւնալու առթիւ , հրեշտակաց իննեակ դասակարգութիւնք ինն օր հանդէս կատարեցին իւրաքանչիւր դասակարգութիւն առանձին . եւ յետայնու սովորութիւն դարձած էր որ ամեն տարի Համբարձման տարեդարձին իննօրեայ հանդիսիւ կը տօնէին Աստուածորդուոյ յաղթութիւնն ի վերայ մահու եւ սատանայի : Իսկ հրեշտակի Խոր Վիրապէն բացակայ գտնուած օրն Իշխանութեանց դասակարգութեան (որում կը պատկանէր Ս. Գրիգորի պահապան հրեշտակն) հանդիսի օրն էր : — Ինչքան որ այս աւանդութիւն բանաստեղծական կերպարանք ունենայ , մէկ բան քաջ գիտեմք , որ Ս. Գրիգոր իւր երկարամտայ բանտարդելութեան ժամանակն չէր կարող յուժպէտս վատնել . կը հաւատալու համար փաստի կամ վկայութեան պէտք չունիմք , որ Հայոց արքայի եւ ժողովրդեան դարձն ի քրիստոնէութիւն Ս. Գրիգորի անդադար խոկմանց եւ աղօթից առարկայն էր յընթացս երեքտասան ամսոյ . եւ նոյն իսկ երբ իւր պահապան հրեշտակն բացակայ էր , Աստուծոյ հետ կը խօսէր եւ հրեշտակայ թագաւորի հետ կը խորհրդակցէր այն մեծ եւ սրբազան գործի համար , որոյ արդիւնք եւ լոյս հազար վեց հարիւր տարիներէ ի վեր կը վայելեմք :

2. Հրովարտակի հարածանաց ընդդեմ ֆրիսոնեից . —

ՁԳրիգոր հեռացնելէն յետոյ Տրդատ շարունակեց իւր քաղաքականութիւն ընդդէմ քրիստոնէից : Հրովարտակներ հանեց ընդդէմ նոցա : Այս հրովարտակներ , որոց երկուսի պատճէնը պահած է Ագաթանգեղոս , ցոյց կը տան որ Տրդատ ինչպէս քաջագործութեանց եւ յաղթութեանց մէջ , նոյնպէս մտածելու եղանակին , գործելու եւ կասկարելու մէջ կատարեալ հոռովմայեցի էր . իւր պետութիւն , ազգն

ու կրօն այնպէս ըմբռնած էր ինչպէս մի հոովմայեցի կըմբռնէր: Առաջին հրովարտակի մէջ կընկարագրէ ինչ որ երկարամայ պանդխտութեամբ տեսած էր Հոովմէական պետութեան մէջ ի մասին քաղաքակրթութեան, թէ ինչպէս կայսերք ամեն ջանք ու հոգ կըտանէին երկրի շինութեան եւ բարգաւաճման համար եւ մայնաւորապէս «ի պատուել զբագինս դիցն աստուածոց շինուածովք եւ սպանդիւք զոհիցն»: Եւ փոխադարձաբար, կըշարունակէ Տրդատ, դիքն Հոովմայեցւոց պետութիւնն եւ աշխարհն կ'օրհնէին «մարդաշատութեանն հոյժ բազմամբոխ լիութեամբ պարարտութեամբն՝ նոցա զայն փոխադարձ փոխարինացն շինութիւն շնորհել»: Տրդատ կըշարունակէ պատմել թէ կայսերք ոչ թէ միայն աստուածպաշտութիւնն (այսինքն, կռապաշտութիւնն) կըքաջալիբէին, այլ ամեն հոգ կըտանէին որ ուրիշ չարտօնուած եւ անծանօթ կրօններ մուտ չդործեն իւրեանց սահմաններ. եւ խիստ պատուհասիւ կըպատժէին զայնոսիկ որք դից երկրպագութիւն եւ պաշտօն կըզլանային, որպէս զի մի գուցէ դիք իւրեանց դէմ ուզողուած արհամարհանքէն բարկանալով՝ մեծամեծ չարիքներ ու վնասներ բերեն պետութեան վերայ: Կայսերաց նախանձայուզութեան այս գեղեցիկ օրինակն իւր առջեւ ունենալով, կըշարունակէ Տրդատ, ինքն եւս կըփափագի իւր երկիրն շէնցնել, խաղաղութեամբ եւ լիութեամբ մեծցնել, իբրեւ հայր իւր հայածին զաւակաց եւ իւր հայրենեաց սան բարօրութեան եւ երջանկութեան համար հոգալ: Ուստի խստիւ կըպատուիրէ որ մի՛ գուցէ մէկը համարձակի անտարբեր գտնուել դից պաշտաման նկատմամբ կամ ո եւ է կերպիւ զնոսա անարգել: Յանցաւորք պէտք է «կապեալ ոտիւք եւ կապեալ ձեռքք եւ կապեալ պարանոցաւ ի դուռն արքունի» տարուին, եւ յանցաւորներն աւելի անաբեկելու համար եւ նոցա ձերբակալումն դիւրացնելու համար, կըխոստանայ յանցաւորի «տուն եւ կեանք եւ արարք եւ ստացուածք եւ զանձք» նուիրել «այնոցիկ որ զայնպիսիսն ի մէջ ածցէ»:

Երկրորդ հրովարտակն երեւի առաջինէն մի քանի տարի վերջ հրատարակած էր: Չնայելով առաջնոյն մանրամասն բացատրութիւնն, եւ իւր բռնած քաղաքականութեան չարժառիթն ու նպատակն, այն խիստ միջոցներն որով կոոց անարգանքը կըսպառնայր, եւ այն մեծ հրապոյրն որով այն ժամանակի վարչական սովորութեանց համեմատ

լրտեսութիւնը կը քաջալիւրէր, դարձեալ քրիստոնէութիւնն Հայոց մէջ օր ըստ օրէ կը տարածուէր եւ դից պաշտամունքը կը պակասէր: Ուստի երկրորդ հրովարտակն կարճ ու կտրուկ գրուած մի է եւ Տրդատայ զայրոյթն իւր առաջին հրովարտակի անյաջողութեան վերայ՝ կը յայտնէ: «Ըյիշեցնէ թէ ի՛նչպէս իւր նախնեաց՝ յաղթութիւն եւ խաղաղութիւն կը պարգեւէին դիք որքան փամանակ նոքա (իւր նախնիք) կոոց պաշտաման հաւատարիմ կը պահէին իւրեանց հպատակներ, եւ ընդ հակառակն, երբ այլ եւս զգիսն չյարգեցին, ձախորշութեանց հանդիպեցան, ինչպէս ինքն եւս բաւական տարիներ մերժուեցաւ իւր պետութենէ: Այս անգամ յատկապէս կը յիշէ «աղանգն քրիստոնէից» եւ կը խոստանայ զայնս քաղաքական իշխանութեան յանձնողին «յարքունուստ պարգեւք եւ պատիւ»: Իսկ ով որ չյայտնէ կամ թագցնէ զքրիստոնէայս, «այսպիսին ընդ մահապարտս համարեալ լիցի, եւ ի հրապարակ արքունի եկեալ մեռցի, եւ տուն նորա յարքունիս երթիցէ»: Այս երկրորդ հրովարտակի մէջ մասնաւորապէս կը յիշէ զՊրիգոր, որ թագաւորի սիրեցեալ վաստակաւորն լինելով հանդերձ՝ չխնայեց, եւ կոոց պաշտօն չըմատուցանելու համար իոր վիրապը ձգել տուաւ «զի անդէն իսկ միանգամայն օձից լիցի կերակուր»: Տրդատ կը վերջացնէ իւր այս սաստիկ հրովարտակ ասելով. «Առ սիրով եւ առ ահիւ գիցն գրեցի ինչ. զի եւ ի ձեզ առ լիցի այս եւ երկիւղ ի մահուանէն. այլ զի կեցջիք ընդ հովանեաւ դիցն՝ եւ ի մէնջ բարիս մարթաջիք գտանել»:

3. Ս, Հոսիսիսնեանք. — Այս հրովարտակաց համաձայն բազմաթիւ քրիստոնէայք հալածանաց, խոչտանգանաց եւ մահուան ենթարկուեցան. բայց նոցա ահուհներ եւ նահատակութեան պարագայք դժբախտաբար պատմութեան մէջ աւանդուած չեն. կամ աւելի լաւ, Սրբոց Հոսիսիսեանց նահատակութեան զէպքեր այնքան կարեւոր տեղ բռնած են մեր ազգային եկեղեցական պատմութեան մէջ որ նոյն միջոցի բոլոր ուրիշ նահատակներ եւ նահատակութիւններ մոռացութեան մատնուած են: Ըստ պատմութեան Ազաթանդեղոսի եւ Խորենացոյ, Հռովմայ մէջ Ս. Պօղոսի անուամբ կը ըստուար կուսանաց մի վանք կայր, որոյ գլխաւորն կամ մայրապետն էր ազնուական տոհմէ՝ Գայիանէ անուամբ, եւ բազմաթիւ կոյսեր

անդ ժողովուած՝ զինքեանս նուիրած էին աղօթից եւ բարեգործութեան: Մին ի կուսանաց, որոյ անունն էր Հռիփսիմէ «ի դասերաց ուրումն՝ յաստուածապաշտ եւ ի թագակալ տոհմէ», եւ մայրապետի առանձին սիրելի սանն էր, իւր բարեպաշտական հոգեւոր յատկութեանց հետ մէկ տեղ օժտեալ էր նաեւ արտաքին մարմնաւոր չքնաղ գեղեցկութեամբ: Նոյն ժամանակի Հռովմայ կայսր Դիոկլետիանոս Ս. Հռիփսիմեայ գեղեցկութեան համբաւը լինելով՝ ուզեց իւր կին առնել զնա: Բայց երբ Ս. Հռիփսիմէն մերժելո՛ւն եւ մայրապետի դիմադրութեամբն տեղեկացաւ կուսանաց քրիստոնեայ լինելն, ուզեց հալածել եւ բռնութիւն գործ դնել ընդդէմ նոցա: Ս. Գայիանէ չար հետեւանքէն վախենալով՝ իւր կուսաստանը ցրուեց, եւ կրօնաւորք խումբ խումբ այլ եւ այլ հեռաւոր երկիրներ փախան, յԵգիպտոս, յԱսորիս եւ ի Միջագետս:

4. Ս. Հռիփսիմեանք ի Հայս. — Իսկ ինքն Ս. Գայիանէ իւր սիրեցեալ եւ մասնաւորապէս ի կայսերէ հալածեալ Հռիփսիմէ սանի եւ ուրիշ երեսուն եւ հինգ կուսանաց հետ միասին փախան ի Հայս, «յԱյրարատ գաւառ ի Վաղարշապատ, զոր եւ Նորաքաղաքն կոչեն, ի նիսոս թագաւորացն Հայոց»: Վաղարշապատի մօտերն իբրեւ քրիստոնեայ կրօնաւորներ զաղտագողի ապրելու պարտաւորեալ էին, եւ քաղաքի մերձակայ այգեստանի հրնձանայարկի մէջ իւրեանց բնակարան կամ աւելի լաւ թաղատտեղի հաստատած էին: Այստեղէն մայրաքաղաքի քրիստոնեայ ժողովրդեան եւ հոգեւորականաց հետ կրնային հաղորդակցութիւն հաստատել եւ հետզհետէ իւրեանց գործունէութեան ասպարէզն ընդարձակել Հայոց մէջ: Իւրեանց ապրուստը կրճարէին ապակեղէն ուլունք շինելով, որ արհեստն ինչպէս այժմ Իտալիոյ մէջ չատ զարգացած էր, եւ հաւանական է որ Հռիփսիմեանց շինած ուլունքներ լաւ ընդունելութիւն գտած էին երրորդ դարու Վաղարշապատի հայ կանանց կողմանէ, որք շատ կըսիրէին ուլունքներով զարդարել իւրեանց անձերն:

Բայց շատ չուտով Ս. Հռիփսիմեանց այս խղճակեաց խաղաղութիւն եւս խանգարուեցաւ. քանզի Դիոկլետիանոս յուսախաբ լինելով Ս. Հռիփսիմէի մերժմամբն եւ կուսանաց փախչելովն, ամեն տեղ խնդրակներ կըզրկէ որ գտնեն վերադարձնեն սուրբ կոյսերն: Ի վերջոյ տեղեկանալով որ Հայոց սահմանն անցած էին, առան-

ձին նամակ մի կըզրէ առ Տրդատ թագաւոր: Այս նամակ, որոյ պատճէնը պահուած է Ագաթանգեղոսայ պատմութեան մէջ, վերին աստիճան հետաքրքիր գրութիւն մի է: Երրորդ եւ չորրորդ դարու քրիստոնէից սովորութեանց պատկերը կը ներկայացնէ, ինչպէս այն դարու հեթանոս ինքնակալք ըմբռնած էին, եւ այնքան կը համաձայնի հեթանոս հեղինակաց՝ քրիստոնէից գէմուղղուած գրութեանց հետ, որ անվաւերութեան որ եւ է կասկած չի մնար: Դիոկլետիանոս կըզանգատի նախ քրիստոնէից՝ Հռովմէական պետութեան մէջ օր ըստ օրէ տարածուելու մասին, որով, ինչպէս կը կարծուէր, կայսրերը կ'արհամարուէին: Նոցա կրօնական պաշտամունքն կը նկարագրէ ասելով՝ «Ձի ինքեանք զմուռեալ ոմն զխաչեալ պաշտեն, եւ փայտի երկիրպագանեն, եւ զոսկերս սպանելոցն պաշտեն, որ զիւրեանց մահն՝ որ վասն Աստուծոյն իւրեանց՝ փառս եւ պատիւ համարին . . . զի մեր սուրբս բթացան, եւ նոքա ոչ զարհուրեցան ի մեռանելոյ»: Քրիստոնէից գործած ընկերական չարիքներն եւ ընտանեաց մէջ յառաջ բերած գգտութիւններ եւ պառակտումներն կը թուէ, «Եւ զկանայս անգամ յարանց եւ զարս ի կանանց կենդանւոյն մեկնեալս հեռացուցանին: Թէպէտ եւ ազգի ազգի պատուհաս տանջանաց ի վերայ եղաք, առաւել եւս տոչորեալ յորդագոյնս տարածեցաւ ազանզն նոցա»: Այս երկար բացատրութենէն վերջ, Դիոկլետիանոս իւր սրտի իրական եւ անմիջական վիշտը կը յայտնէ՝ Հռիփսիմեան քրիստոնեայ կուսանաց փախուստն ի Հռովմայ եւ իւր անձին գէմ քրիստոնէից կողմէ ցոյց տուած արհամարանքն, որով մերժեցին զՀռիփսիմէ կայսեր տալ ի կնութիւն: Ուստի կը խնդրէ Տրդատէն՝ Հայոց կողմերն փախչող Հռիփսիմեան կոյսերն զանել, եւ զՀռիփսիմէ կամ ի Հռովմ վերադարձնելով կամ իւր մօտ պահելով, միւսներն՝ նորա փախստեան օղնականներ եւ պատճառ եղողներ «վրիժուց մահուան արժանի արասցէ»:

5. Նանասակուրթիւն Սրբոց Հռիփսիմեանց . — Այս կայսերական նամակն ստանալով, Տրդատ կը հետաքրքրուի տեղեկանալ փախստական քրիստոնեայ կուսանաց ու՛ր եւ ի՛նչ դրութեան մէջ լինելն, եւ շուտով կը տեղեկանայ որ նոքա արդէն Հայոց մայրաքաղաքի մէջ կը գտնուին: Ագաթանգեղոսի նկարագրութենէն կ'երեւի որ Տրդատայ զգացումն զէպ ի Հռիփսիմեան կուսանքն

նոյն էր որպէս Դիոկլետիանոսինը: Տրդատ իւր վերջնական որոշումն ընդդէմ քրիստոնէից տուած էր եւ ի բոլոր սրտէ կ'առէր զնոսա . հետեւաբար իւր սրտի մէջ վճռած էր հռովմայեցի կուսանաց մահն: Միւս կողմանէ հետաքրքիր էր տեսնել այդ չքնադագեղ կոյսն Հռիփսիմէ , որոյ գովեստն ի Հռովմայ գահոյիցն մինչեւ Վաղարշապատ կայսերական հրովարտակաւ հռչակուած էր: Տրդատայ պաշտօնեայք նախ քաղաքավարութեամբ հրաւիրեցին զՀռիփսիմէ յարքունիս եւ ի հարսնութիւն թագաւորին . բայց երբ մերժեց , բռնութեամբ բերին: Տրդատ իւր բոլոր յատկութեամբ , մարմնաւոր ոյժով անկարող եղաւ զՀռիփսիմէ հրապուրել կամ նորա վերայ բռնանալ: Ս. Գայիանէ կոչուեցաւ որ իւր սանին խրատէ թագաւորի կամաց անսալ . բայց երբ հասկացան որ ընդհակառակն Հռիփսիմէին յարիութիւն եւ ի դիմարդրութիւն թագաւորին կըքաջալերէ , ծեծեցին եւ քարերով նորա ատամներն կտորտեցին , եւ նորա խրատելն աւելի վնասակար համարելով , հեռացրին եւ առանձին բանտի մէջ պահեցին զնա: Իւր անյաջողութենէն զգուելով ու ձանձրանալով այլ եւս , եւ լաւ հասկանալով որ այդ սաստիկ դիմարդրութեան պատճառն՝ այն քրիստոնէական կրօնն էր որով կըհետեւէին փախստական կուսանքն , կըհրամայէ սրախողխող սպանանել զնա եւ նորա ընկերներն: Դահիճք Ս. Հռիփսիմեայ լեզուն կտրեցին՝ մարմինը մասամբ այրելով . փորը պատառեցին , աչքերը հանին եւ ամբողջ մարմինը յօշոտելով՝ սպանին: Մի եւ նոյն օրն Ս. Հռիփսիմեայ ընկերներէն երեսուն երկու կոյսեր եւս սրով սպանին:

Միւս օրն զՍ. Գայիանէ տանջանաց ենթարկեցին , որ համարձակած էր Հռիփսիմէին թագաւորին կամաց հակառակ խրատ տալ: Ուստի զկնի լեզուն կտրելու կամ «ընդ ծոճրակսն հանելոյ» եւ այլապէս եւս խոչտանգելու , մնացեալ միւս երկու ընկերաց հետ մէկ տեղ մայրաքաղաքէն դուրս Մեծամօրի կոչուած կամուրջի վերայ կըտտամահ արին՝ մարմիններն անգթութեամբ յօշոտելով սպանին :

6. Վաւերութիւն Պատմութեան Ս. Հռիփսիմեանց . — Սրբոց Հռիփսիմեանց նահատակութեան մասին այլ եւ այլ կասկածներ յայտնուած են ազգային եւ օտարազգի

բանասիրաց կողմանէ, որովհետեւ անհասկանալի կը թուի որ Դիոկլէտիանոս կայսեր հետ սերտ առնչութիւն ունեցող այս ղէպքն անծանօթ մնացած է հեթանոս պատմագրաց: — Որքան որ Հայոց դարձի համար մեծ վարեւորութիւն ունեցած է Հռիփսիմեանց նահատակութիւն, պէտք է գիտնալ որ երրորդ դարու մէջ այս ղէպք իբրեւ աննշան իմն, պալատական մի ներքին միջադէպ կը նկատուէր, եւ Դիոկլէտիանոսէն զատ ուրիշ ոչ ոք փոյթ կը նար ունենալ կայսեր կանանց թիւը բազմանալու մասին: Նոյնպէս առ Տրդատ գրուած հալածանաց հրովարտակի պէս հարիւրաւոր գրութիւնք ղրկուած են այլ եւ այլ կուսակալաց որք պահուած կամ յիշատակուած չեն ի հեթանոս պատմագրաց: Միւս կողմէ կարելի է Ս. Հռիփսիմեանց նահատակութեան պարագայից եւ մանրամասնութեանց մէջ բանաստեղծական աւելագրութիւններ եւ վկայաբանից ներելի այլայլութիւնք մուտ գործած լինին: Սակայն պատմութեան գլխաւոր եւ հիմնական կէտերն անուրանալի են, եւ Հայ Եկեղեցւոյ գրեթէ չորրորդ դարէն ի վեր մեղ հասած աւանդութեան հաստատութիւնն ունին: Ինչպէս պիտի տեսնենք յաջորդ յօդուածով, Ս. Լուսաւորչի ժամանակէն ի վեր մշտնջենական վկայ կեցած են Ս. Էջմիածնի մէջ Սրբոց Հռիփսիմեայ եւ Գայիանեայ հոյակապ եկեղեցիք, որք շինուած են նոցա ճգնութեան (*) կամ մարտիրոսութեան տեղեաց վերայ: Եօթներորդ դարու մէջ Կոմիտաս կաթողիկոս Ս. Հռիփսիմեայ եկեղեցին նորոգելով Անճիկն Լուիւրեա քանչեւ շարականը յօրինեց որով նահատակութեանց գլխաւոր պարագայներն գովաբանելով կը նկարագրէ: Թող որ մեր ազգի հնագոյն պատմիչք ըստ էութեան համաձայն կ'աւանդեն Ս. Հռիփսիմեանց պատմութիւն:

Օտարազգի (հեթանոս կամ քրիստոնեայ) պատմչաց լռութիւն այս մասին երբէք չի կրնար անվաւերութեան իբր փաստ ծառայել: Այսօր մին եւրոպացի պատմագիր կը վկայէ Հայոց ի քրիստոնէութիւն դառնալու կարեւորութիւնը եկեղեցական պատմութեան մէջ: Այսու հանգերձ

(*) Մի քանի տարով յառաջ Ս. Հռիփսիմեայ վանքը նորոգելու միջոցին զետնափոր հնձանանման յարկեր երեւցան, որ մեծ կարասների կամ գինւոյ ջտեմարանի նմանութիւն ունին: Այս տողերն գրողն ինք տարւով յառաջ այդ հնութիւնները տեսաւ եւ իւր առաջնորդէն սոյն բացատրութիւնն ստացաւ որ շատ հաւանական կը թուի եւ մօր եկեղեցւոյ դարաւոր աւանդութեան կրամաձայնի:

Եւսեբրիոսի պէս նշանաւոր պատմագիրն եւ նորա յաջորդներէն ոչ սակաւք բոլորովին զանց կ'առնեն՝ եկեղեցական պատմութեան այս կարեւոր մասին յիշատակութիւնն : Ինչպէս Հայոց դարձի պատմութիւն , նոյնպէս եւ այդ պատմութեան մէկ պարագայն , որ է Ս. Հռիփսիմեանց նահատակութիւն , մեր ազգային պատմութեան վկայութեամբ եւ մեր եկեղեցւոյ անընդհատ աւանդութեամբ վաւերացեալ է , եւ օտար վկայութեան կարօտ չէ :

ՔԱՌԱՍՆՈՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆԲ Ի ՎԵՐԱՅ ՄԱՀԱՑՈՒ ՄԵՂԱՑ

ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ

(Սուեցեալ յազգային եկեղեցւոյ Հայոց Մանչեսթրի ի Բուն
Բարիկենդան Կիւրակի Մեծի Պահոց 1900).

Տէր ամբարտաւանից հակառակ կայ , տայ շնորհս խոնարհաց :—Յակ. Դ 6 :

Մահացու մեղաց առաջինն է՝ Հպարտութիւն , որ կընչանակէ զինքն իրական արժանիքէն աւելի բարձր համարել : Հպարտութիւն այն մեղքն է որ մասնաւորապէս Սատանայի անկման պատճառ եղաւ , մայր եւ աղբիւր է այլ ամենայն մեղաց , մտաւոր մեղաց սկիզբն եւ իմն է : Հպարտութեան հակառակ առաքինութիւնն է խոնարհութիւն : Բայց խոնարհութիւն եւս իւր չափ ու սահմանն ունի . եւ կեղծ խոնարհութիւնն նոյնքան խտելի է որքան հպարտութիւնն : Մարդոյս պարտքն է իւր ընտելեան ստորին հակումներէն եւ իւր շրջապատի ստորին հանգամանքներէն ինքզինքը ի վեր բարձրացնել . նորա պարտքն է ջանալ մի գիրք գրաւել աշխարհիս վերայ եւ իւր ընկերաց շրջանին մէջ , եւ զգալ որ իւր անձին մէջ մի զօրութիւն եւ ոյժ ունի գործելու : Արժանապատուութիւնը , ձգտումը դէպ ի բարձրագոյն

վիճակ, պատուոյ զգացումն, եւ յարակից յատկութիւնք ոչ թէ միայն ներելի են եւ հպարտութիւն չպիտի համարուին. այլ մինչեւ իսկ, ըստ տեղւոյ եւ ժամանակի յարմարութեան, ցանկալի եւ գովելի առաքինութիւնսեր են. եւ դոցա հակառակն՝ անձին ստորնացումն եւ պատուոյ արհամարհանքն, ծանր բարոյական պակասութիւնք նկատելու են: Իրական մտաւոր եւ բարոյական արժանիքն չի կարող ծածկուիլ եւ ի թագստեան մնալ: Այն սուրբ եւ ճգնազգեաց մարդիկ որք ի հնումն յայրս եւ ի փապարս լերանց՝ իւրեանց կեանքը կ'անցնէին, կամ այն իմաստուն վարդապետներ որք վանուց առանձնութեան մէջ սրբազան ուսմամբ եւ սրբակեաց վարուք կրկրթուէին, հակառակ իւրեանց առանձնասիրութեան բուր ջանից, բազմաթիւ հետեւողներ եւ աշակերտներ ունեցան, եւ նոցա լոյսը կրփայլէր ի հեռաստանէ, եւ մինչեւ ցայսօր կրփայլէ ընդ յոլովս դարուց, եւ մեր հիացում կըջարժէ նոցա չնաչխարհիկ կենցաղավարութեան վերայ: Այս չէ հպարտութիւն:

Հպարտութիւնն այն է երբ մեր բոլոր ջանք ու աշխատութիւն միմիայն մեր անձին օգտի համար գործ կ'ածեմք, եւ Աստուծոյ պատկանելի պատիւն ու արժանիքն՝ մեր անձին վերագրել կըջանամք:

Շատ անգամ աղքատ մարդիկ կըկարծեն թէ միայն բարձրագոյն դասակարգի անձինք, այսինքն հարուստներն եւ ազնուականներն բնականաբար հպարտ են, իսկ ստորին դասակարգի պատկանողք, այսինքն, աղքատ եւ հասարակ ժողովուրդը բնականաբար խոնարհ է: Այս կարծիքը սխալ է: Մի ազնուականի զաւակ իւր ճոխութեան մէջ կարէ շատ պարզասէր եւ հեզ լինիլ. մինչդեռ մի աշխատաւոր մշակի որդին կարէ, իւր խեղճ կացութեամբն եւ թշուառ ապրուստովն հանդերձ, հպարտ ու մեծամիտ լինիլ: Հպարտութիւնն ոչ թէ բարձր դիրք եւ վիճակ ունենալն է ըստ ինքեան, այլ բարձր դիրքի եւ վիճակի հասնելու ապօրինի ձգտումն, կամ այդ առաւելութեանց չարաչար, ցուցամոլ, գոռոզ ու անիրաւ գործածութիւնն է: Փարիսեցիք կըմեղադրուէին ոչ թէ նորա համար որ ունէին կամ արժանի էին ունենալու «զբարձրագահս ի ժողովուրդս եւ զնախողջոյնս ի հրապարակս», այլ նորա համար որ կըձգտէին, ամեն ճիգ կըթափէին ձեռք բերելու, կըսիրէին այդ ընկերային առաւելութիւններն:

Հպարտութիւնը ինչպէս վերը յիշուեցաւ Սատանայի անկման պատճառն էր, որ գոհ չմնալով իւր բարձր վիճակէն, ուզեց ինքզինքն Բարձրելոյն Աստուծոյ հաւասարել: Հպարտութիւնն զինքն այն աստիճան ամբարտաւանութեան մէջ ձգեց որ մինչեւ անգամ փորձեց կռուով հասանել իւր ամպարիշտ նպատակին, եւ երբ այդ յանդըհնութիւն ամենայն չափ ու սահման անցաւ, յայնժամ

Գերագոր զօրութիւնն ի կամարաց զինքն արփենից

Շրաբորբոք արկ գըլխվայր, անկումն անախգ եւ բոցակէզ .

Անկաւ նա յանյատակ ի խորխորատըն կորըստեան՝

Կալ անդէն ի հրոյ պատիժս յադամանդեայ պնդեալ շրղթայս .

Ամենակալ Բարձրելոյն զի խիզախեաց ծայն տալ ի զէն»:

Հպարտութիւնն խտացոյց Փարաւոնի սիրտը, որ չուզեց Աստուծոյ կամաց եւ հրամանին խոնարհիլ, որ թէպէտ ինն անգամ դառն փորձառութեամբ տեսաւ յիմարութիւնն՝ Աստուծոյ կամաց դէմ դնելուն, եւ չարաչար հարուածներով ինքն եւ իւր ժողովուրդ պատժուեցան՝ Իսրայէլացւոց որդիքը Եգիպտոսէն չարձակելու համար, դարձեալ պնդեց ու կրկնեց իւր դիմադրութիւնն. ծանր կըհամարէր որ իւր պէս անեղ թագաւոր մի ստիպուի հակառակ իւր կամաց տեղի տալ մի խեղճ ու դաղթական ժողովրդեան պահանջին. հպարտութիւնը զինքն բորբոքեց վերջին վայրկեանին մեծաւ զօրօք եւ սպառազինութեամբ Իսրայէլի ժողովրդեան ետեւէն երթալ զայն կամ վերադարձնելու կամ կոտորելով բնաջինջ առնելու: Բայց Աստուծոյ արդարութիւնը կանխեց, եւ Փարաւոն իւր բազմիցս կրկնեալ ամբարտաւանութեան եւ հպարտութեան պատիժը կրեց՝ իւր բոլոր զօրքով ու կառքերով Կարմիր ծովին մէջ հեղձամահ կորնչելով:

«Փարաւոնն հանդերձ կառօքն ընկզմեցաւ ի հոսանս ջուրցն . եւ որդիքն

Իսրայէլի գնացին ընդ ցամաքն ի մէջ ծովուն»:

Հպարտութիւնն էր որ զկայէն առաջին մարդասպանը շինեց, որովհետեւ չհանդուրժեց որ իւր եղբոր Հարելի արժանաւորագոյն եւ պատուականագոյն պատարագն Աստուծոյ աւելի հաճելի լինէր քան թէ իւր չնչին նուէրը զոր կէս սրտով եւ չկամութեամբ կըմատուցանէր իւր Ստեղծողին:

Հրէից Յովրամ թագաւորի ժամանակ, երբ Ասորիք Հրէաստանի վերայ արշաւելով՝ շատ վնասներ հասուցած էին Իսրայէլեան ազգին ու երկրին, Ասորւոց զօրավար՝

Նէեման անուամբ բորոտութեան ակտէն բռնուած լինելով, իւր կնոջ հրեայ սպասուհւոյն խորհրդով՝ երիւարօք եւ կառօք կ'երթայ Եղիսէ մարգարէի տան դուռն եւ կըխնդրէ որ Աստուծոյ մարգարէն զուրօ գայ եւ իւր հիւանդութիւնը բժշկէ: Եղիսէ, հաւանօրէն Նէեմանայ հաւատը փորձելու համար, եւ ոչ իսկ անձամբ կ'երեւնայ Ասորի զօրապետին, այլ սպասաւորի ձեռքով լուր կըյղէ թէ՛ «Երթ լուա եօթն անգամ ի Յորդանան, եւ դարձցի մարմին քո եւ սրբեցիս»: Այս պաղ եւ անքաղաքավար երեւոյթ ունեցող պատգամն կըվշտացնէ զՆէեման, կըվիրաւորէ նորա հպարտութիւնն. «Ի՞նչ, ինձպէս մեծ իշխանի մինչեւ իսկ անձամբ չերեւիլ, յետոյ ասել թէ գնա յեռու Յորդանան զետի մէջ լուացուիր եօթն անգամ: Մի՞թէ Ասորուց Փարփարա եւ Աբանա դետերն աւելի լաւ չեն: Ի՞նչ կըլլար, եթէ անձամբ զար իւր Աստուծոյ անունը կարդար եւ ձեռք գնէր իմ վերայ եւ այնպէս առողջացնէր»:

Հպարտութիւնը Նէեմանայ մտածել եւ խօսել կըտար ինչպէս մեզ շատերուս յաճախ մտածել ու խօսել կըտայ երբ կըսկսինք Աստուծոյ նախախնամութիւն եւ տնօրէնութիւն քննադատել. գոհ չենք որ այս ինչ կամ այն ինչ բանը նախախնամութիւնը մեր ուզածէն ու կ'արժածէն տարբեր կերպով կարգադրած է: Բայց եթէ յաջողութիւն եւ օրհնութիւն կ'ուղենք, պէտք է ամենայն հպարտութիւն ի բաց դնենք եւ Աստուծոյ տնօրինեալ ճանապարհաւ ընթանամք, ինչպէս ի վերջոյ Նէեման եւս համոզուեցաւ Աստուծոյ մարգարէի հրամանին հնազանդելով՝ իւր ցաւին առողջութիւն գտնել:

Դարձեալ կըկարդամք ի Գործս Առաքելոց թէ մի երեւելի հանդիսի առթիւ, երբ Հերոլդէս թագաւոր արքայական պատմուճանօք զարդարեալ՝ կընստէր յատենի, եւ կըխօսէր հրապարակաւ, իւր մարդելոյց աւագանին եւ իւր գոռողութիւնէ վախցող ունկնդիր ամբոխն սկսան ազդակել թէ՛ «Աստուծոյ քարքառ է, եւ ոչ մարդոյ»: Հերոլդէս հպարտութեամբ ընդունեց այս հայհոյական շողքորթութիւն եւ բնաւ չմերժեց իրեն առ յերկիւղէ ուղղեալ՝ այլ Աստուծոյ պատկանելի պատիւն: «Եւ անդէն, կըչարունակէ սրբազան պատմադիրն, եհար զնա հրեշտակ Տեառն, փոխանակ զի ոչ ետ փառս Աստուծոյ, եւ եղեալ որդնալից՝ պատակեցաւ»:

Ահաւասիկ հպարտութեան պտուղն :

Հպարտութեան չարիքներն եւ նորա չարագոյն հետեւանքներ ամեն օր կը տեսնենք : Այս մեղքն իրուամբ կոչուած է մայր եւ աղբիւր ամենայն չարեաց : Ազգաց պատմութիւնը լցուած է անգութ ու խստասիրտ թագաւորաց, իշխանաց, եւ մեծամեծաց հպարտութեան նախճիրներով : Այդ դասակարգի անձանց մէջ տիրող զգացումն եւ մշտնջենական մտահոգութիւն պատճառող խընդիրն է՝ «Ո՞վ իցէ ի մէնջ մեծ» : Մարդիկ ըստ մեծի մասին իւրեանց մեծութիւնն հաստատել կը ջանան՝ ուրիշները նուաստացնելով, ճնշելով եւ բռնութեամբ ի ներքոյ օտից պահելով : Մեր Փրկչի աշակերտք մինչեւ իսկ սկսած էին այս հպարտ մեծութեան վերայ խորհիլ, եւ իւրաքանչիւր մին կ'ուզէր ինքն իշխել միւսներու վերայ, կ'ուզէր ինքն մեծ լինել, առանց այդ մեծութեան պարտաւորութեանց ծանրութիւնը կշռելու, առանց մտաբերելու թէ իրապէս մեծ լինել՝ կրնչանակէ ամենածանր աշխատանք եւ մտահոգութիւն, այլոց բազմաց պատասխանատուութիւն իւր վերայ առնուլ . «Որ կամիցի ի ձէնջ մեծ լինի՝ եղիցի ձեր պաշտօնեայ . եւ որ կամիցի ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր ծառայ» :

Մեր ազգային պատմութիւնը լի է այս կարգի հպարտութեան գործերով, որ մեր ազգային թշուառութեան պատճառ եղած է դարերէ ի վեր թէ ի բուն հայրենիս մեր եւ թէ գաղթականութեանց մէջ :

Հպարտութիւնն ամեն օր կը տեսնուի ըստ մեծի մասին նիւթական հարստութեան հետ զուգակցեալ : Երբ Տէրն մեր կ'ասէ, «Դիւրին է մալխոյ ընդ ծակ սաղան, քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել», նա չի ուզեր ասել թէ նիւթական հարստութիւն ըստ ինքեան չար իմն է եւ ամեն հարուստ անպատճառ երկնից արքայութենէ կը զրկուի . այլ, ասիլ կ'ուզէ, նիւթական գոյիւք իւր ընկերներէն առաւելեալ մարդն ամենէն աւելի հպարտութեան մեղաց ենթակայ է, որ պատճառաւ երկնից արքայութենէ բնականաբար կը զրկուի : Այո՛ ինչքան մեծատուններ կան որք կը կարծեն թէ ամեն ինչ կրնան առնել, ամեն հաճոյք կարեն վայելել, ամեն մարդոյ վերայ որ իրենցմէ նուազ ունեւոր է՝ կարեն իշխել ու բռնանալ ի շնորհք իւրեանց հարստութեան (թէսլէտ եւ տակաւին լսուած չէ որ մի հարուստ մարդ իւր ցանկացեալ՝ սրտի

գոհունակութիւնը կրցած լինի ձեռք բերել միմիայն իւր հարստութեամբ) :

Ի՛նչքան անգամ կըհանդիպինք հարուստներու որք իւրեանց նիւթական կարողութեան ապաւինելով՝ ամեն օրէնք ու պատշաճութիւն ոտնակոխ կ'անեն, եկեղեցւոյ կարգ ու կանոն առ ոչինչ գրելով ըստ քմաց կըխանդարեն կամ խանդարել կըտան, հոգեւոր պաշտօնեայններն աչ ու զողի մէջ կըձգեն հացալուրկ առնելու սպառնալեօք, Աստուծոյ եւ Աւետարանի անյիզլի օրէնքն խափանել կամ փոփոխել կըտան, եւ իւրեանց հպարտութեան մեղքովն ուրիշներ եւս պէսպէս մեղաց մէջ կըձգեն : Ուրեմն, զարմանք չէ որ Քրիստոս կ'ասէ . «Իւրին է մալխոյ ընդ ծակ ասղան, քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել» : Ուշադրութեան արժանի է որ Տէրն մեր չի ասեր «անկարելի է» կամ «անհնարին է» մեծատան համար յարքայութիւն Աստուծոյ մտանել, այլ միայն զժուարին է, ասել կ'ուզէ, զիւրին չէ : Եւ արդարեւ, փա՛ռք Աստուծոյ, քրիստոնէութեան առաջին օրերէն ի վեր Եկեղեցւոյ մէջ գտնուեր են եւ այսօր իսկ կըգտնուին մեծահարուստ անձինք որ հպարտութենէ բոլորովին ազատ լինելով՝ իրաւամբ ժառանգած են կամ պիտի ժառանգեն երկնից արքայութեան արժանաւոր բաժին : Ի Գործս Առաքելոց յիշուած մեծատուն տիկինն Տարիթա իւր խոնարհ երկիւղածութեամբն այրեաց եւ աղքատաց մայր եւ քոյր հանդիսացած էր : Ակիւղաս եւ Պրիսկիլա ունեւոր ընտանեաց խոնարհութեան բարի օրինակ թողած են Ս. Գրոց պատմութեան մէջ, եւ Ս. Պօղոս առաքելոյն մտերիմ բարեկամութեան արժանացած էին : Ամեն զարու մէջ գտնուած են, ինչպէս յաւուրս մեր կըգտնուին անտարակոյս, մեծատուն հաւատացեալք, որք իւրեանց նիւթական գոյից իրական արժէքն եւ պատասխանատու չութիւնը հասկանալով՝ մեծամեծ բարեգործութեանց պատճառ եղած են առանց հպարտանալու եւ մեծամտութեան, եւ ամեն ժամանակ Աստուծոյ փառք տուած են ասելով՝ «Ծառայք անպիտանք եմք, զոր պարտն էաք առնել՝ արարաք» :

Հպարտութեան փորձութեան կարի ենթակայ են նոքա ամենեւին որք որեւէ կերպիւ իւրեանց ընկերներէ առաջնութիւն կըվայելեն երկրիս վերայ, մասնաւորապէս ուսմամբ եւ գիտութեամբ : Կատարեալ ուսումնականն եւ

գիտունն չի կարող երբէք հպարտ լինել, վասն զի իրական գիտութիւնը մեր աննշան փոքրութիւնը տիեզերաց մէջ մեր մտաց հանդէպ կըրերէ, մեր ոչնչութիւնն առաջի Աստուծոյ կըպատկերացնէ: Բայց եւ այնպէս որքա՛ն անգամ գիտնականք կամ գիտութեան համբաւ ունեցողք զինքեանս ամենազօր համարած են եւ զեր ի վերոյ քան զընկերան իւրեանց, որոց վերայ շատ անգամ արհամարհանօք կընային իբրեւ տգէտ եւ խաւարամիտ, կարի չափազանց խտրութիւն կըդնեն ի մէջ իւրեանց եւ այլոց, մինչդեռ տարբերութիւնը համեմատաբար շատ քիչ է. վասն զի մեզմէ ամենէն գիտնականն եւ իմաստունն շատ քիչ բան գիտէ, այլ մեծամեծ բաներ չգիտնալու եւ մարդկային հասկացողութենէ վեր լինելու գիտակցութիւն ունի զոր շատ անգամ տգէտ ու անուս մարդն չունի: Իրապէս ուսեալ եւ գիտնական մարդն նմանցուցած են պտղով ծանրաբեռնեալ մի խնձորենուոյ, որոյ ոտեր ծանրանալով դէպ ի գետին կըկախուին: Նթէ իրական գիտնականն այսքան խոնարհ եւ հպարտութենէ ազատ լինելու է, ուրեմն ո՛րքան առաւել պարտին ի հպարտութենէ հրաժարիլ նոքա ամենեքին որ բարձրագոյն ուսմանց հետեւելու առիթ ունեցած չեն: Աւա՛ղ թէ ի՛նչքան անգամ գիտութեան այս չնչին առաւելութիւնն ունեցող անձինք հպարտութեամբ սո՛նքացեալ՝ ամեն ընկերային կարգ ու կանոն ու խաղաղութիւն խանգարելէ չեն խորչած. իւրեանց մոլար վարդապետութեամբ հաղաբաւոր անմեղ ու միամիտ մարդոց գայթակղութեան ու թշուառութեան պատճառ եղած են, իւրեանց գրական կարողութիւնն եւ համողելու ձիրքեր չարաչար գործածած են ազգաց եւ ժողովրդեան մէջ անաստուածութիւն եւ անկրօնութիւն, թերանաւատութիւն եւ ամբարշտութիւն տարածելով:

Բայց այս կարգի մարդոց դէմ մտքառելի այնքան դժուարին չէ որքան այն իմաստակ դասակարգին որ աւա՛ղ օր ըստ օրէ մեր ազգի մէջ կըտարածուի: Չէ՞ որ Ռէնանի, Շտրաուսի, Տարուինի եւ Քանդի պէս գիտնական անձինք այս ինչ եւ այն ինչ քրիստոնէական վարդապետութեան չէին հաւատար եւ իւրեանց չհաւատալու պատճառներ առանձին գրքերով հաստատած են կամ հաստատելու պէսպէս փոճեր արած են: Ուրեմն մենք ալ ասեմք թէ չենք հաւատար, կ'ասեն մեր պարոն եւ

տիկինն իմաստակներ . որպէս զի կարծուի թէ մենք ալ այդ երեւելի արանց պէս գիտական ճանապարհաւ հասած ենք այս ինչ կամ այն ինչ եզրակացութեան : «Տարուին կարդցա՞ծ ես» կըհարցնէր ինձ մի քանի տարւով յառաջ մի Կ. Պօլսեցի վարժուհի . բայց շուտով խօսակցութիւնը փոխեց , երբ պատասխանեցի . «Տարուինի ո՞ր գիրքը» :

Ազգային լրագրութիւնն ամեն օր սոյնպիսի իմաստակութեան տգեղ նմոյշներ յերեւան կըբերէ , եւ հպարտութեան այս շար բոյսն ժանտախոտի պէս անհրաւէր եւ անմշակ կըտարածուի կըվխտայ մեր խեղճ ազգի մէջ , եւ օր ըստ օրէ կըծածկէ իւր զազրելի ու փշալից տերեւներով , ժանտաժուտ անթիւ պտուղներով Հայաստանեայց եկեղեցւոյ անդեր ու բուրաստաններ , ուր երբեմն անուշահոտ ծաղիկներ , ուրախացուցիչ ողկոյզն ու զմայիչ ձիթենին իւրեանց բարիքներ կ'առատաձևուէին : Սոքա են , սիրելի ժողովուրդ , Հպարտութեան գլխաւոր երեւոյթներն եւ պտուղներն , զորս ուսումնասիրել եւ ճանաչել ամեն քրիստոնէի պարտքն է , որպէս զի զգուշութեամբ արմատախիլ առնեմք եւ ոչնչացնեմք մեր սրտերէն . եւ զմեզ եւ մեր սիրտերը վայելուչ եւ արժանաւոր տաճար Հոգւոյն Սրբոյ կացուցանեմք՝ խոնարհութեան առաքինութեամբ զարդարեմք զհոգիս մեր , եւ սպասենք խոստման Տեառն թէ «Որ խոնարհեցուցանէ զանձն իւր , բարձրացի» : Ամէն :

ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ

ՓՈՐՉՈՒԹԻՒՆ ՅԱՆԱՊԱՏԻ .

Ս Աւետարանը կ'աւանդէ մեր Աստուածային Փրկչի երկրաւոր տնօրէնութեանց միջոցին պատահած բազում հրաշալի և խորհրդաւոր դէպքեր: Նախընթաց դասերով տեսանք արդէն նորա (1) Մարդեղութիւն, (2) Թլփատութիւն, (3) Մոգուց այցելութիւն, (4) Առաջին այցելութիւն Տաճարին, (5) Մկրտութիւն: Այս անգամ նորա փորձութեան վերայ պիտի խորհինք, որ տեղի ունեցաւ անմիջապէս զկնի Մկրտութեան ի Յորդանան գետ, երբ Ամենասուրբ Երրորդութիւնն յայտնուեցաւ: Յիսուս Ս. Հոգւոյն ազդեցութեամբ գնաց յանապատ Սատանա, էն փորձուելու համար, ուր մնաց քառու ուն օր անսուղ ծովապահութեամբ:

Մտաբերենք որ քառասուն թիւը Ս. Գրոց մէջ խորհրդաւոր նշանակութեամբ գործածուած է բազմիցս: Թրինակի համար

- (1) Զրհեղեղը քառասուն օր տեւեց .
- (2) Քրիստոսի յարութիւն առնելէն մինչև համբառնալն քառասուն օր տեւեց .
- (3) Մովսէս Սինայի լեռան վերայ քառասուն օր մնաց,
- (4) Որդիքն իսրայելի քառասուն օր անապատին մէջ թափառեցան .
- (5) Հրէից մանուկներ ծնուելէն քառասուն օր վերջ Տաճարին մէջ Աստուծոյ կ'ընծայուէին, ինչպէս Տէրն մեր ընծայեցաւ:

Այս խորհրդով քրիստոնէական եկեղեցւոյ մէջ ևս քառասնորդական պահքը, այլ եւ այլ առիթներով (ծննդեան, թաղման, քահանայից ձեռնադրութեան) քառասունք կը պահուի:

Ս. Մարկոսի Աւետարանէն կ'իմանանք որ Տէրն մեր այդ առանձնակեցութեան միջոցին «էր ընդ գաղանս»: Մարկ . Ա 13: Նոյնպէս Հին Ուխտի ժամանակ Դանիէլ մարգարէ անօթի առիւծուց մէջ բանտարկուած լինելով՝ անվնաս մնաց, զի Աստուած նոցա բերանը զոցած էր: Դան . 9 23:

Երևի Քրիստոս այդ ամբողջ քառասուն աւուրց մէջ այլ եւ այլ կերպերով փորձուեցաւ ի սատանայէ (Ղուկ . Դ 2): Այդ փորձութեանց գլխաւորներն եւ ամենէն զօրաւորներն Աւետարանի մէջ յիշուած վերջին երեք առաջարկներն էին, որով սատանան կ'աշխատէր զՅիսուս մեղաց մէջ ձգել: Բայց իւրաքանչիւր անգամ դիմադրեց շարին թելադրութեանց:

Քրիստոսի փորձուելու պատճառն ինչ էր .

- (1) Որպէս զի իբրև կատարեալ մարդ մարդկային բնութեան ամենայն հանգամանաց ենթարկուէր .

(2) Որպէս զի սատանային յաղթէր .

(3) Որպէս զի մեզ բարի օրինակ ցոյլ տար մեզաց
դիմադրելու :

Առաջին Փորձութիւն . — Քարերը հացի փոխելով առաջարկութիւն .
Ղուկ . Դ 3 : Արդեօք կարո՞ղ էր փոխել : Անշուշտ կարող էր : Ուրեքն
ինչու՞ չփոխեց : Նա արդէն քառասնօրեայ ծումապահութեամբ և
փորձութեան մտային առաջնապով յողնած էր : Սատանայի խորա-
մանկութիւն կը թելադրէր որ քանի որ հացի պէտք ունէր Յիսուս,
և քարերը հրաշիւք հացի փոխելու կարողութիւն ունէր, ինչու՞
գործ չածէր իւր աստուածային զօրութիւն : Յիսուսի տեղ ուրիշ
մէկը սատանայի առաջարկութեան մէջ որեւէ սխալ կամ մեղսաւթ
պարագայ չպիտի կարենար տեսնել : Սակայն սխալ գործած կը ի-
նէր Յիսուս, եթէ իւր մարմնաւոր պէտքերը հողալու համար իւր
աստուածային զօրութիւնն ի կիր արկանէր : Նա կարող էր 5,000 ժո-
ղովորդն անպատին մէջ, եւ մի ուրիշ անգամ 4,000 ժողովուրդն
կերակրել . բայց իւր անձին մարմնաւոր անօթութիւնը հրաշքով
հագեցնել՝ ներելի չէր նմա :

Մարդ փորձութեան կ'ենթարկուի, երբ կը փորձուի .

(1) Ապօրինի միջոցաւ իւր մարմնաւոր ցանկու-
թիւնները գոհացնել .

(2) Ապօրինի միջոցներ գործածել իւր երկրաւոր
շահուց համար :

Ուշադրութեան արժանի է որ Տէրն մեր մինչև ցայս վայր որ և
է հրաշք գործած չէր . սակայն սատանայ դիտէր որ հրաշք գոր-
ծելու կարող էր : Այս փորձութիւն աւելի ազդու առնելու համար,
սատանայ յեգնօրէն կը խօսի — «Եթէ դու իցես Որդի Աստուծոյ»,
(Ղուկ . Դ 3) . նոյնպէս և զմեզ մեզաց մէջ ձգելու համար ամեն
խորամանկ միջոցներ գործ կ'ածէ և տեսակ տեսակ սնտոի մըտա-
ծու ձեռքով կը գրգռէ և կը դրդէ զմեզ :

Երկրորդ Փորձութիւն . (ըստ Մատթէոսի) — Ինքզինքն Տաճարի աշ-
տարակէն վար ձգել : Տաճարը տանելով զՅիսուս, սրբազան շէնքի
աշտարակներու միոյն վերայ կը կեցնէ զնա և կ'առաջարկէ որ
զինքն վար ձգէ ի տես անդ հաւաքուած ժողովրդեան, վստահ լի-
նելով որ իւր երկնաւոր Հայր և պահապան հրեշտակներն պէտք ե-
ղած ինամբը պիտի տանէին Աստուածորդւոյն վերայ : Արդարև
արժան է յուսալ ի Տէր (Սաղմ . ՂԱ 11-12), բայց կարի յանդուգն և
վտանգաւոր իրաց ձեռնարկելու չէ առանց Աստուծոյ որոշ հրամանի,
միմիայն նորա համար որ Աստուած խոստացած է իւր նախախնամող
ձեռքը մեր վերայ պահել : Փորձութեան ոյժն այս էր . Քանի որ
Քրիստոս աշխարհ եկած է՝ իւր Որդի Աստուծոյ և Փրկիչ մարդկան
ընդունել տալ աշխարհի, ահա գեղեցիկ առիթ մի . տաճարի աշ-
տարակէն վար իջանելով օդի մէջէն՝ Տաճարի շրջափակի մէջ հա-

և քրեալ բաղմուտիւն զինքն անմիջապէս պիտի ընդունէր իբրև Միսիա և Փրկիչ: Արդարև այս էր իւր նպատակն. բայց այդ նպատակին հասնելու օրինաւոր ճանապարհն այդ չէր:

Մեզ ևս այսպիսի փորձութիւններ կըզան յաճախ, երբ կըփորձուինք.

- (1) Ինքզինքնիս վտանգի մէջ ձգել Աստուծոյ նախախնամութեան և պահպանութեան վերայ վստահելով.
- (2) Անմիտ ու յիմարական գործոց կըձեռնարկենք սնտկառութեամբ:

Երրորդ Փորձութիւն. — Երկրպագութեան պաշտօն: Սատանայ կ'առնէ կըտանի զՅիսուս մի բարձր լերան վերայ կեցնելով՝ աշխարհիս պետութեանց և Թագաւորութեանց մէկ մասն աչաց տեսութեամբ և մնացեալն տեսլեամբ կըցուցանէ նմա: «Ձայս ամենայն տաց քեզ, եթէ անկեալ երկիրպագանիցես ինձ» կ'առաջարկէ սատանայ: Արդարև Քրիստոս եկած էր աշխարհի վերայ բարոյապէս տիրելու. բայց ներելի չէր որ մէկ պպօրինի մեղանշական գործով ջանար հասանիլ այդ նպատակին:

Նոյնպէս ևս զմեզ կըփորձէ սատանայ.

- (1) Բարի նպատակի մը հասնելու համար միայն մէկ մեղք գործել.
- (2) Գործի մէջ յաջողելու համար երբեմն փոքրիկ անհաւատարմութիւններ գործել, սուտ խօսելով, խաբելով և այլն.
- (3) Մեր մեղքը ծածկելու համար ստել և կեղծել:

Քրիստոս ի՞նչպէս դիմադրեց սատանայի փորձութեանց: Իւրաքանչիւր անգամ Ս. Գրոց խօսքերովն, որ է «սաղաւարտ փրկութեան և սուսեր Հոգւոյն Սրբոյ» (Եփ. Զ 17): Իւրաքանչիւր մէկ դիւական առաջարկին Հին կտակարանէն առաջ բերած խօսքով պատասխանեց: —

- (1) ԲՕԲ. Ը 3. (2) ԲՕԲ. Զ 16. (3) ԲՕԲ. Զ 13. Ի 20:

Ուրեմն մեր Փրկչի օրինակին հետեւելով պարտիմք և մեք ընդշիմանալ սատանայի Ս. Գրոց քաջալերութեամբ:

ՆՐԱՏԱԿԱԼ. — 1. Յիսուս փորձուեցաւ վասն մեր (ա) իբրև օրինակ, (բ) և իբրև կատարեալ մարդ:

2. Սատանայի մօտենալէն զգուշանամք. նա զմեզ կըփորձէ ընդհանրապէս եւ մեք տկար եմք կամ այն մասին մէջ յորում տկար եմք:

3. Ս. Գիրքը յարգել և գործ ածել իբրև սուսեր Հոգւոյն Սրբոյ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԲՈՂՈՒՔԱԿԱՆ ՔԱՐՈՉԻՉ ՄԻ

Ամերիկայէն ստացած ենք Լօուիզ Մեյլ օրաթերթի Սեպտեմբերի երկու թիւերն, որոց մէկը կը պարունակէ Լօրէնս քաղաքի հար բողոքական քարոզիչ Պարոն Կարապետեանի կողմանէ գրուած մէկ նամակ, եւ միւսն այդ նամակի պատասխանն նոյն քաղաքի Հոգեւոր Հովիւ Արթ. Տէր Արսէն Վ. Վեհունիէ գրուած: Պարոն Կարապետեանի գրութեան իսկական նպատակն է յիշեալ օրաթերթի ընթերցողաց յայտնել իւր գործունէութիւնն Լօրէնսի մէջ. իւր հօտը կը բաղկանայ 31 հոգիէ, եւ իւր ժողովներուն մասնակցողաց թիւը մէկ տարուայ մէջ հասած է 1213, իսկ ինքն այդ ժամանակամիջոցին 726 այցելութիւններ տուած է. իւր փոքրիկ հօտն 72 տօլար նուիրած է Ամերիկայի Միսիոնարական ընկերութեան, որ փոխադարձաբար Պարոն Կարապետեանի անձնական ծախքերը կը հոգայ: Այս ամենը « վերի ինթրքսքիմզ » տեղեկութիւններ են զոր մէջնք եւս գրեթէ Ամերիկացւոց չափ հետաքրքրութեամբ կը կարդանք: Բայց տպաւորութիւնը կը փոխուի երբ կրտսններն որ Պարոն Կարապետեան իւր այս պարզ տեղեկութիւնն յալածնելու առթիւ Հայոց Եկեղեցւոյ վերայ մի կարգ սուտ ու սխալ եւ արհամարհական դիտողութիւններ կ'անէ: « Հայոց Եկեղեցին, կ'ասէ Պարոն Կարապետեան, իւր կենդանութիւնը կորսուած է, եւ գրեթէ ոչ այլ ինչ է բայց եթէ մի աղքատին հաստաւ տուութիւն: Հոգեւորականք ընդհանրապէս աղէտ են, եւ շատ քիչեր անոնցմէ աստուածարանական զպրօցի մը ներսը տեսած են: Աղօթքը կը կատարուի գրաբառ լեզուաւ, որ ժողովրդեան անհասկանալի լինելով՝ չի կրնար շինիչ ներգործութիւն ունենալ. որով Եկեղեցին շատ քիչ հոգեւոր ազդեցութիւն ունի ժողովրդեան վերայ: Շատեր կը գանդատին այս ամենայն անպատեհութեանց դէմ, եւ յոյս կայ որ մէկ օր բարեփոխութիւն յառաջ գայ. բայց այդ օրն դժբաղտաբար շատ հեռու է»: Այս բոլորովին աւելորդ եւ վիրաւորիչ յառաջաբանէն վերջ Պարոն Կարապետեան կը սկսի պատմել իւր ո՛վ լինելն, ի՛նչ դպրօցի ընթացաւարտ լինելն եւ իւր 31 հոգիէ բաղկացեալ հօտի որպիսութիւններ, ինչպէս վերը նշանակեցինք:

Լօրէնսի նորընտիր Հոգեւոր Հովիւ Արթ. Տէր Արսէն Վ. Վեհունի, զոր մի քանի ամսով յառաջ Մանչեսթրցիքս

ալ ճանաչելու բաղձն Նունեցանք, ազդո՞ւ պատասխան մի կրտայ նոյն թերթին մէջ, որոյ գլխաւոր կէտերն հետեւեալն են:—

Առաջին՝ Հայոց Եկեղեցին ոչ չՀայոց Կաթողիկե (*) եկեղեցի » կը կոչուի ոչ « Գրիգորեան Կեղեցի » , այլ Հայոց Առաջնական Եկեղեցի , եւ ի Սրբազան Առաքելոցն Թադէոսէ եւ Բարթողիմէոսէ հաստատուած լինելով՝ բոլորովին անկախ է սկզբնաւորութեամբ , եւ Անգղիոյ մէջ քրիստոնէութեան մուտ գործելէն դարեր յառաջ Փոքր Ասիոյ մէջ Քրիստոսի Ս. Աւետարանը տարածելու միակ միջոցն էր : Երկրորդ՝ թէ Հայոց Եկեղեցին իւր կենդանութիւնը կորուսած է կամ ոչ՝ թող անաչառ ընթերցողը դատի այն անթիւ նահատակներէն որք նոյն իսկ յաւուրս մեր իւրեանց կեանքը զոհեցին Քրիստոսի Ս. Աւետարանի սիրոյն համար : Եթէ ճշմարիտ է թէ « Արիւն մարտիրոսաց սերմն Եկեղեցւոյ » , ուրիմն Հայոց Եկեղեցւոյ կենսունակ գծրութիւն եւ արդիւնաւորութիւն յայտնի է : Երրորդ՝ Հայոց Եկեղեցին Աստուածաբանական Դպրոցներ չունի ի Ռուսիա , ի Տաճկաստան եւ ի Պարսկաստան , որոնց մէջ նշանաւոր հայ աստուածաբաններ հոգեւորականութեան ապագայ սերունդը կը կրթեն : Բաց աստի ոչ սակաւք Գերմանիա եւ ձերիչ Եւրոպական դպրոցներ կ'երթան իւրեանց աստուածաբանական ուսումն առաւել եւս կատարելագործելու : Չորրորդ՝ Հայոց Եկեղեցւոյ պաշտօնական լեզուն Պարոն Կարապետեանի կարծածին չափ ալ անհասկանալի չէ , եւ այդ լեզուի շինիչ ներգործութիւնն է որ մեր բուն հայրենեաց մէջ հարիւրաւոր եւ հազարա-

(*) « Կաթողիկ » բառն Անգլիերէն կը նշանակէ Կաթողիկէ եւ ոչ թէ Հռովմէական ինչ որ շայր Արսէն ասել կ'ուզէ : Անտարակոյս շայտատենայ Եկեղեցին Կաթողիկէ Եկեղեցի է , ինչպէս կը դաւանիմք Շաւատարի մէջ , որովհետեւ նա ունի եւ անփոփոխ կրպակէ քրիստոսի Եկեղեցւոյ կաթողիկէութեան ժամանակ ունեցած հաւատն : Նոյնպէս Կաթողիկէ կրնան կոչուիլ այն բոլոր եկեղեցիք որք նոյն Կաթողիկէ Շաւատն ունին : Այս մտքով միայն կարելի է այս բառն այժմ գործ ածել , եղէ ոչ քրիստոսի Եկեղեցւոյ պառակտել հանգամանաց ներքոյ Կաթողիկէ Եկեղեցի այլ եւս չկայ : Շուովմէական Եկեղեցին ինքզինքն մրակ Կաթողիկ (այսինքն , Կաթողիկէ) եկեղեցին կը համարի , եւ բողոքականք որք Կաթողիկէ Եկեղեցւոյ հաւատոյն համար փոյժ չունին՝ « Կաթողիկ » բառի գործածութիւնը Շուովմէական եկեղեցւոյն թողած են : Որքան որ մենք եւս լատինաձայն Կաթողիկ բառն Շուովմէականց կը պատկազկէմք , դարձեալ պետք է զգուշանալ որ եւրոպական լեզուա չստեմք թէ մեր Եկեղեցին Կաթողիկ (այսինքն , Կաթողիկէ) չէ :

ւոր բարեպաշտ հաւատացեալներով կըլցնէ մեր եկեղեցիներ ոչ թէ միայն կիրակի օրեր այլ նոյն իսկ շաբաթամէջ: Ս. Գրոց եւ եկեղեցական մատենից այդ լեզուաւ թարգմանուած կամ շարագրուած լինելն չեւ զարաւոր նուիրականացումն այդ բարբառին (որ կանոնաւոր դրպարոցական ընթացք կատարող ամեն հայու բաւականին հասկանալի է) մէկ կողմէ, եւ աշխարհաբառի բազմաթիւ տարբեր ճիւղերու դրութիւնը (ըստ որում իւրաքանչիւր երկիր կամ նահանգ իւր առանձին գաւառաբարբառն ունի) միւս կողմէ՝ այս մասին որ եւ է փոփոխութիւն անհնարին կացուցած է մինչ ցարգ: Սակայն Պարոն Կարապետեան մոռցած է յիշել որ քարոզն միշտ աշխարհաբառ կըխօսուի: Հինգերորդ՝ Թէ Հայոց Եկեղեցին իւր ազգեցութիւնը կորուսած չէ հայ ժողովրդեան վերայ յայտնի է այն բազմաթիւ եկեղեցիներէն, վանքերէն եւ իւր ազգեցութեամբ հաստատեալ եւ կառուցեալ ուրիշ շէնքերէն, որք ամենքն ալ հայ ժողովրդեան յօժարակամ տուրքերով կըպահուին: Նոյն իսկ Ամերիկայի մէջ, որոյ հայ բնակիչք ըստ մեծի մասին աղքատ եւ աշխատաւոր դասին պատկանող անձինք են, հայ ժողովուրդը մէկ եպիսկոպոս եւ ինն հոգեւորական կըպահէ իւր Ուսուցարարի, Նոր Եօրքի, Փրովիտէնսի եւ այլ եկեղեցեաց ծախքերը ինքնին կընոգայ առանց արտաքին օգնութեան:

Ըօրէնսի նորընտիր արթուն Հովիւն իւր հօտի եւ մեր Եկեղեցւոյ շնորհակալութեան եւ շնորհաւորութեան արժանի է, որ փութացեր է իւր ազգու եւ կտրուկ ոճով պաշտպանել մեր Ս. Եկեղեցին թշնամեաց յարձակմանց դէմ: Թիւերու հաշիւը Ամերիկացիներու վերայ մեծ ազգեցութիւն կըգործէ, սորա համար Պարոն Կարապետեան Լօուիզ Մեյքի ընթերցողաց առջեւ իւր հօտի ու գործունէութեան պարագայից թիւերը կըդնէ: Շատ ցանկալի է որ Արժ. Տէր Արսէն Վարդապետ Պարոն Կարապետեանի այս բարձր օրինակին հետեւելով Ամերիկայի Հայոց պարագայներն թիւերու վերածէ: Յայնժամ, կարծեմ, Ամերիկացիք պիտի տեսնան որ եթէ Պարոն Կարապետեանի 31 հոգիէ բաղկացեալ հօտի աղօթից մասնակցութիւնը մէկ տարուայ մէջ 1213 է, Լուսաւորչածին հայոց մասնակցութիւնը իւրաքանչիւր տասն հազարին՝ 12, 130, 000 կ'անէ: Պարոն Կարապետեանի 726 տարեկան այցելութեանց հանդէպ, եթէ Յովսէփ Սրբազան եւ իւր անձ-

նուէր կղերն մեր ճանչցած մարդիկն են, Ամերիկայի Առաջնորդութեան հովուական այցելութեանց թիւը միլիոնի մօտ բան մը լինելու է: Մի ժողովուրդ որ գոնէ իւր հովուէի անհրաժեշտ ծախքերը չի կարող մատակարարել, որով օտարի օգնութեան կարօտ կը մնայ, իւր քարոզչի բերնովն մի ուրիշ եկեղեցւոյ ժողովուրդ պախարակելու չէ՝ իբր թէ «Հայոց Եկեղեցին հայ ժողովրդեան վերայ շատ քիչ ազդեցութիւն ունի», մինչդեռ Պարոն Կարապետեանի քարոզութեան ազդեցութիւն իւր հօտին վերայ զգալի եւ նիւթական նշաններով չենք տեսներ: Միայն մէկ բանի մէջ պիտի «յաղթուի» Հայր Արսէն. այսինքն, մինչդեռ Պարոն Կարապետեան առատ ոռճիկ կը ստանայ Միսիոնարական ընկերութենէն, Հայոց ինն կամ տասն հոգեւորականներէն եւ ոչ մին մէկ սէնթ ստացած է կամ ստանալու յոյս ունի այդպիսի աղբիւրներէ: Հայ աշխատաւորն Ամերիկայի գործարանաց մէջ դառն քրտինք թափելով վաստակած ստակէն բաժին կը հանէ իւր հոգեւորականին, որ իրեն հետեւած է սփոփելու եւ միսթարելու պանդխտութեան երկրին մէջ, եւ ստէպ յիշեցնելու իւր հայրենեաց եւ Մայր եկեղեցւոյ սրբութիւններն: Այս վայրկեանիս Ամերիկայի Սրբազան Առաջնորդն, Գեր. Յովսէփ եպիսկոպոս, Քալիֆորնիա կը գտնուի, ուր նորաչէն Հայոց եկեղեցին (այս երրորդ կամ չորրորդ հայկական եկեղեցին է Ամերիկայի մէջ) պիտի օժէ: Ամերիկայի հայ գաղթականութիւնն մեր համայն ազգի առանձին համակրութեան արժանի է, եւ Առաքել պատմագրի մը պէտք ունինք որ նկարագրէ այն տխուր դեպքեր ու արկածներ որ հեռացրին այդ ժողովուրդ իւր տունէն եւ հայրենիքէն: Երբ մի այսպիսի մարտիրոսական ժողովրդեան մէջ ապրող բողոքական մի հայ իւր 31 հոգիէ բաղկացեալ հաւատակիցներն պատճառ կը բռնէ՝ այդ գաղթականութեան կրօնական զգացումներն անգլիական թերթի մը մէջ վերաւորելու կը ձեռնարկէ, մենք աւելի պայծառ կերպով կը մբռնենք հայ բողոքականաց կողմանէ յաճախ յեղյեղեալ «եղբայր ենք» քարոզն, եւ միութեան առաջակներն, եթէ Պարոն Կարապետեան հայ բողոքական ընդհանրութեան կարծիք կը ներկայացնէ:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈՏԱՆԱՒՈՐՔ

ՀԱԽԱՔԵԱՅ ԱՐԺ • ՏԵՐ ԱԻԵՏԻՍ Վ• ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ :

Լաւ է մարդ անքուն մընայ ,
 Բան թէ ահեղ երազ տեսնայ .
 Հանգիստ ու գոհ սիրտ ունեցիր ,
 Փառքն ու պատիւ տեղը մընայ :

Տընաքանդը տունն չ'ունենար ,
 Չար սիրտ մարդը քունն չ'ունենար .
 Նեղսիրտ մարդը գոյնն չ'ունենար ,
 Չարը լաւ անունն չ'ունենար :

Չարին բերնումը յիշոց ,
 Սըրտումը կըրակ ու բոց .
 Կարելի՞ է , ու չը լինի ,
 Ճակտումը մէկ երկու խոց :

Անըզգամին տեղ չը կայ ,
 Ուր տեղ նըստի , նեղ կուգայ ,
 Անմեղին՝ ամեն նեղութիւն
 Իբրեւ մեղր ու եղ կուգայ :

Թէ Աստուծոյ մարդ չես եղեր ,
 Սատանի մարդ մի՛ լինիր .
 Թէ դժոխքէն մարդ չես խըլեր ,
 Դժոխքը մարդ մի՛ տանիր :

Գաղտնիքը գաղտ պահողին
 Ապրի , մընա՛յ , ասացին .
 Գաղտնիքը դուրս հանողին
 Կորի՛ր . գընա՛ , ասացին :

Ոսկի արծաթ ու ճեվահիր մըսխեցիր ,
 Չաղքատացար այնքան , ո՛րդի ,
 Երբ ժամանակդ ու պատիւըդ մըսխեցիր ,
 Եղար մի անառակ որդի :

Բարեկամն ինչ որ ըզգայ ,
 Լաւ բարեկամն ալ ա՛յն կ'ըզգայ ,
 Մի՛ ասեր թէ այդ գարմանք է .
 Սըրտէ՛ ՚ի սիրտ ճանապարհ կայ :

Թէ բարեկամ ունիս հազար ,
 Շատ չէ՛ սակաւ , ո՛վ եղբայր ,
 Մէ թըշնամի թէ ունեցար ,
 Քիչ չէ՛ շա՛ք է , ո՛վ եղբայր :

Թշնամի էր՝ գընաց եկաւ ,
 Ինձի բարեկամ դարձաւ ,
 Բարեկամ էր՝ չըգնաց չեկաւ ,
 Ինձի թըշնամի դարձաւ :

Սուտ բարեկամ
 Եւ սուտ դըրամ ,
 Ո՛րն ալ ճանաչես կամ գըտնես ,
 Նայէ՛ որ շուտ մէկդի թողնես :

Ես փաչա ,
 Դուն բոշա ,
 Բարեկամացանք ,
 Հաւսարեցանք :

Բարեկամը մարդու գըլխին կը նայի .
 Իսկ չարկամը մարդու ոտքին կը նայի ,
 Խեղցին՝ խելքին , զարքին ու վարքին ,
 Իսկ յիմարը դըրսի տեսքին կը նայի :

Թէ թըշնամիդ մըրջիւն լինի ,
 Մեղաւոր ես նէ՛ վախեցի՛ր .
 Թէ թըշնամիդ առիւծ լինի ,
 Դուն անմեղ՝ ես , անվախ կացի՛ր :

Հիւր գընաս՝ ուր որ կանչեն ,
 Չը կենաս՝ երկար ատեն ,
 Հիւրը չ՛ախորժիր հիւրէն ,
 Տանուտէրն եւ ոչ մէկէն :

Թէ գընացիր մէկին տունը ,
 Լաւ նայէ՛ երեսի գոյնը ,
 Թէ վար նայեց , ձայնը քաշեց ,
 Շուտով տուր ետքի ողջոյնը :

Երթալն երթամ ի՞նչ անեմ ,
 Ներս որ մըտնամ ի՞նչ ասեմ .
 Մեր շունն հոս կացին բերա՞ւ ,
 Միթէ ա՞յս պէտք է հարցընեմ :

Թէ ուրիշին փոս կը փորես ,
 Նայէ՛ որ շատ չը խորես .
 Որ երբ դու մէջ գըլորուիս ,
 Ողջ մընաս , ողջ դուրս ելնես :

Թէ ամիսը մէկ մի գաս ,
 Կուտես գաթա փախլաւա .
 Թէ որ օրը մէկ մի գաս ,
 Կուտես քօթակ փալախա :

Ապերախտներ շատ ես գըտած ,
 Ամենեւին մի՛ դըժգոհար .
 Յայտնի նըշան առ քեզ համար ,
 Որ լաւութիւն շատ ես արած :

Ո՛ր տեղէն որ հաց ես կերեր ,
 Ա՛յն տեղը քար չը ձըգե՛ս .
 Ո՛ր տեղէն որ ջուր ես խըմեր ,
 Ա՛յն տեղը վար չը թըքե՛ս :

Հաւիկը ջուր որ խըմէ ,
 Աչք երկինք կը վերցընէ .
 Որ փառք տայ ըստեղծողին .
 Ինձ եւ քեզ սովրեցընէ :

Ախ՛ , սատանին մին տեսնեմ ,
 Երեսին լաւ մի թըքնեմ .
 Ոչ սատանան տես ե՛ղբայր ,
 Ոչ ալ երեսին թըքիր :

Բարկ քացախն իր ամանին ,
 Կը բերէ կ'ասեն վընաս .
 Տէրն հեզոց տայ երանին ,
 Լայնսիրտ եղիր , ապրիս մընաս :

Աշխարհըս լայն արձակ է ,
 Բայց սիրտըս նեղ , ի՞նչ օգուտ .
 Ճանրան հանգիստ շխտակ է ,
 Կօշիկըս նեղ , ի՞նչ օգուտ :



